ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ

ԱՐԱՔՍԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արաքս համայնք,
Արմավիրի մարզ, գ. Գայ, Ա. Խաչատրյան-1

23 օգոստոս 2022 թ.

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՁ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՀՌՉԱԿԱԳՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՕՐՎԱ ԱՌԹԻՎ

Հարգելի՛ արաքսեցիներ.

Շնորհավորում եմ բոլորիս Հայաստանի Անկախության հռչակագրի ընդունման օրվա առիթով: 32 տարի է անցել այն օրից, երբ Գերագույն խորհուրդն ընդունեց Հայաստանի Անկախության հռչակագիրը: Դա հայ ժողովրդի միասնական և հավաքական կամքի դրսևորումն էր, որով ազդարարվեց հայոց պետականության սկիզբը: Անկախության հռչակագիրը Հայաստանի նորանկախ Հանրապետության հիմնարար, համակարգաստեղծ փաստաթուղթն է, որն իր մեջ ամփոփում է մեր ազգային իղձերն ու երազանքները, պետության ու պետականության կայացման, երկրի ներքին ու արտաքին քաղաքականության իրականացման առաջնահերթությունները: Շնորհավորում եմ բոլորիս այս դարակազմիկ իրադարձության տարեդարձի առթիվ:

ԱՐԱՔՍ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ղ. ՂԱԶԱՐՅԱՆ